




173

6 II. 2







ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաքանակը բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մեր կը ստանանք սեփական
ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:

Դրվել «ՄՇԱԿ» կարելի է և ՌԻԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-

կիւնում, Թամաշիլի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ներկայ համարը բաղկացած է ՄԷԿ
ԵՒ ԿԵՍ Թերթից:

ԲՈՎԱՆԳԱՌԻԹԻՒՆ

«Մշակ» տաւան և վեցերորդ տարին. — ՆԵՐԿԱՅ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դաստիարակական անհրաժեշտ ճշ-
մարտութիւնը. Հայոց թարգման. Անդրկովկասի
արքունական դիւանիցները. Բաղրի Մարդասի-
րական ընկերութիւնը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց Հայաստան. Արտաքին
լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ԲՈՐ-
ՍԱ. — ՖԵԼԵՏՈՆ.

«ՄՇԱԿ» ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

«Մշակ» մանկավարժական տաւան
և վեցերորդ տարին իր գոյութեան տաւան
հոգեւորական յետն շրջանը, կարող է դո-
հանալ իր անցած տաւան և հինգ տարվայ
գործունէութեան վրա և հանգիստ ոգով նայել և ապագայի վրա:
Հայերիս մէջ ամեն տեսակ հաստատու-
թիւններ երկար կեանք չեն ունենում: Հա-
յերը, առհասարակ, սիրում են միմիայն
նորութիւնը, ջերմ կերպով են կաշուում ա-
մեն նոր գործին, սակայն քիչ ժամանակից
յետոյ սառչում են դէպի գործը, փոքր առ
փոքր յետ են քաշվում նրանից, այնպէս որ
մեզանում փառաւոր կերպով սկսած գործը
մեծ մասամբ սկսում է փոքր առ փոքր
ընկնել և վերջը խափանվում է: Այդ դը-
րութեան մէջ են և մեր բոլոր ընկերու-
թիւնները, այդ վիճակին են ենթարկվել

ՖԵԼԵՏՈՆ

Նոր տարի. — Ընտանեկան շրջաններ. — Մի գը-
րական երեկոյ. — Հին յիշողութիւններ. — Գործնա-
կան մարդիկ և իրենց խառնուրդ. — Մի ժողով. — Ա-
ռաւօտները խմբագրատան մէջ. — Երկու կանայք.
— Էմիլիանի ճանապարհի աշակերտ. — Մի բաժա-
նորդ. — Յայտարարութիւնները հայոց լրագիրնե-
րում. — Լրագիր և թաղա ձուկ. — Բէկլամներ. —
Պետականական արամադրութիւն անցեալ տար-
վայ առիթով. — Յանկուլթիւններ նոր տարվայ
համար.

Նոր տարին եկաւ:
«Նոր տարի» նոր տարին, ասում են ամենքը մի-
մեկն և ամենքը հաւատացած են, որ նոր տա-
րին աւելի բաղդ ու աշխուժութիւն կը բերի, քան
թէ անցեալ տարին...
Եւ այդ պատճառով ամենքը աշխատում են ու-
րախանայ, կամ դոնէ ցոյց տալ թէ ուրախանում
են: Բայց այդ ուրախութիւնը ինձ թվում է
չինձու, արուեստական լար և դնում եմ ոչ
մի տեղ անկեղծ ուրախութիւն չեմ գտնում: Ա-
մեն տեղ, թէ ընտանեկան և թէ հասարակական
շրջաններում ժամանակը ձանձրացուցիչ, տաղա-
կալի է անցնում:

Հաւաքվում են մարդիկ՝ պարոններ և տիկնե-
ր մի մասնաւոր տան մէջ. — և չը դիտեն ինչ բա-
նի վրա խօսեն, ինչո՞ւ միմեանց դատողեցին: Խո-
սակցութեան նիւթ չը կայ. խօսակցութիւնը չէ
կապվում... Հաւաքվածները միմեանց մէջ ոչինչ
բարոյական կամ մտաւոր կապեր, համարաշխ չա-
նը չունեն. բոլորը իրար օտար են թէ մտքերով
թէ ձգտումներով: Եւ ինչո՞ւ միմեանց մէջ
տեսակ երեկոյթ... Հասակաւոր աղամարդիկ ա-
ռանձնաւոր են մի սենակում և սկսում են
թուղթ խաղալ, կանայք, օրիորդներ և երիտա-
սարդներ սկսում են այլ և այլ անմիտ խաղեր
խաղալ, յետոյ սկսում են պլանտի դաշնակցու-
թեանը պար դալ. — իսկ գիշերվայ ժամը երկուսին
բոլորը սկսում են ճոխ ընթրիք անել... Ընթրի-
քի ժամանակ դատաւարարված են լսելու անհամ
հանաքներ, անմիտ կենացներ, անկապ խօսակ-
ցութիւն, շատ անգամ ծագում են հիւրերի մի-
մեանց մէջ դժգոհութիւններ...

Եւ այդ բոլորի պատճառը՝ աննպատակ, անմիտ,
անբովանդակ կեանքն է...

— Հարկաւոր է վերջապէս կեանք մտցնել մեր
ընտանեկան շրջաններում, ասում էր ինձ նորե-
րումս իմ բարեկամներիցս մէկը:
— Ինչպէս...
— Փորձենք ժողովել, մի որ և է գործ սկսել:

Քին, որ «Մշակ» իրան երեք անձնական
օրգան չը համարելով իմացել է գրաւել
մեր հասարակութեան մէջ հասարակաց
օրգանի դերքը և այն էլ առաջադէմ կու-
սակցութեան օրգանի:
Իսկ առաջադիմութիւնը մշտական է,
յաւիտեական է, քանի որ գոյութիւն
կունենայ մարդկութիւնը: Ուրեմն այն օր-
գանը որ միշտ անկեղծ կերպով կը հետևի
անընդհատ առաջադիմութեանը, անկեղծ
կերպով կը ծառայի անընդհատ առաջա-
դիմութեան գործին, նա միշտ էլ կիմանայ
իր եղած դերքը պահպանել հասարակու-
թեան մէջ, երբէք չի ընկնի, չի իջնի իր
մի անգամ գրաւած մակերեսիցից:

Եւ, ընդհակառակն, նա միշտ կառաջա-
դիմի, կը գրաւի ամեն տարի աւելի և ա-
ւելի համակրողներ, աւելի էլ կընդաճակի
իր շրջանը՝ քանի որ ամեն տարի նրան
աւելի և աւելի կաշակցի նոյն իսկ հասա-
րակութեան մէջ գործող առաջադէմ կու-
սակցութիւնը, որ ինքն էլ հետզհետէ ա-
ւելի գիտակցական, աւելի ինքնաձանաչ կը
դառնայ:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՍԽԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՀԵՐԲԵԼԻ ԶԵՄԱՐՏՈՒ-
ԹԻՒՆ

Եթէ մանկավարժութեան մէջ կան մի քանի
պահանջներ, որոնք համարվում են անհրաժեշտ
ճշմարտութիւններ, և որոնց առաջ պէտք է դրուի
խոնարհեցնել ամեն մի մանկավարժ, և ամեն մի
պարտական վարչութիւն, դրանից մէկն էլ այն է,
որ ծեծը անուայ մասն լինի առաւելագույն
միջոց և դաստիարակութեան մէջ, և նրանից
իր երեսը պէտք է դարձնի ամեն մի ուսուցիչ:
Այդ, կրկնում ենք, անհրաժեշտ ճշմարտութիւն է,
որի դէմ կասկածել անգամ անհրաժեշտ է այն մարդ-
կանց, որոնք յանձն են առնում դաստիարակու-
թեան գործը: Դա մանկավարժութեան մէջ, — ա-
ռանց երկմտութեան կարելի է ասել, — այնպիսի
ակսիոմա է, որի մասին խօսելը, որի մասին բա-
ցատրութիւններ տալը ինքն ըստ ինքեան շատ
հին երգ պէտք է համարվի: Բայց, տարաբաղա-
բար, մեր դպրոցական կեանքի մէջ կատարվող
երևոյթիւններ, մեր վարժապետներից շատերի ունե-
ցած տարտամ հասկացողութիւնները և այդ տար-
տամ հասկացողութիւնների չնորոգ դպրոցների
մէջ գործադրվող ծեծը՝ ստիպում է նորից վերա-

Հարկաւոր է որ մեր թէ արական և թէ իրական
տարրը ընտանեկան ժողովներում մի որ և է մը-
տաւոր նպատակ տեսնել...

— Լաւ, փորձենք...
* * *
Մի օր ժողովեցի տաւան մեր ամեն տեսակ գը-
րագէտ մարդկերանց... Կային և տիկնիւններ:
— Պարոններ և տիկնիւններ, սկսեց մէկը, հար-
կաւոր է մի որ և է բարոյական մտաւոր նպա-
տակ մտցնել մեր ընտանեկան շրջաններում հա-
ւաքվող հասարակութեան մէջ:
— Շատ լաւ, շատ լաւ, ձայն տուեցին ամենքը:
— Ուրեմն ինչ անենք:
— Եկե՛ք յօդուածներ գրենք, թարգմանութիւն-
ներ անենք, յետոյ դուցէ մեզ կաջողվի այդ բո-
լորը ամփոփել մի ամսագրի մէջ... մեզ մօտ այ-
ժմ մի ամսագրի կարիք է զգացվում...
— Շատ լաւ, բայց ծրուդ հաւաքվելը մշտա-
պէս Սրա կամ Նրա մօտ հաւաքվելով ծանր կը
լինի տան տիրոջ, կամ տան տիկնոջ համար:
— Իսկ ընթրիք կը լինի, հարցրեց մէկը...
Այդ հարցմունքին պատասխան չեղաւ... տի-
րեց կատարեալ լուռութիւն:
— Շատ լաւ, թղթուութիւն խնդրե՛ք ամսագրի
հրատարակելու, բայց փող կոյ, դուրսը կոյ, որ
մեր բոլոր յօդուածները վճարվեն, հարցրեց մի
ուրիշ:

Դառնալ այդ հին ճշմարտութեանը և նորից դի-
մել մեր մանկավարժ համարվողներին և ասել.
«Դուք վերցրէ՛ք, պարոն մանկավարժներ, այդ
մասնակար միջոցները, դուրս քնցե՛ք ձեր գոր-
ծունէութեան շրջանից ծեծը, իբրեւ անպայման
մասնակար մի սովորութիւն, և մի թողնէ՛ք, որ
դաստիարակութեան վեհ գործին անպատուութիւն
բերի այդ աղեղ սովորութիւնը, որը թէ կրթու-
թեան գործին է միաստու, թէ ձեզ է անպատ-
ուում և թէ ձեր ղեկավարութեան յանձնած սա-
ներին է փչացնում: Բաւական է, որքան հայ ե-
րեւան դողաց ճիւղոտների և քանոնների առաջ:
Եթէ սրանից տաւան տարի առաջ մեր դպրոցնե-
րում գործադրվող փաշա կան մի սարսափելի
շրջան էր կազմում մեր խալիֆայական դպրոցի
մէջ, հաւատացե՛ք, որ այժմեան դպրոցի համար,
որի ղեկավարողները ամեն օր երգվում են դի-
տութեան և մանկավարժութեան անունով, որի
մէջ գործողները առաւօտից մինչև երեկոյ խօ-
սում և ճոռնարանում են Դիստրիկտի, Պետա-
ւոցի, Ֆրեյլի, և այլաբան մանկավարժական
հակառակի քարոզած և պաշտպանած մտքերի և
դադափարների մասին, — այժմեան դպրոցի հա-
մար աւելի մեծ անպատուութիւն է նոյն իսկ
այն ծեծը և այն մարմնական պատիժը, որը կա-
տարվում է ոչ թէ դիտմամբ, այլ համբերու-
թիւնից դուրս գալով, որը կատարվում է
ոչ թէ փաշախայտով և ուղղիւմ, այլ նոյն իսկ
քանոնով:

Մեր հին խալիֆաները համոզված էին որ ա-
ռանց ծեծելու, որ առանց մարմնական խիստ
պատիժների ոչինչ չէ կարելի սովորեցնել, — և
նրանք հաւատարիմ էին իրանց դաւանած բնիկ-
բունքին. իսկ մեր նոր մանկավարժները համարե-
լով իրանց նոր մանկավարժութեան հետեւող, հա-
մարելով իրանց թշնամի հին դպրոցին, համարե-
լով իրանց կրթված, հաւատարիմ ծեծը գործին,
— շարունակում են համարել ծեծը իբրեւ դաստի-
արակութեան մի տարր: Այդպէս, ուրեմն, խօս-
քով դաւանել դաստիարակութեան լայն սկզբ-
բունքները, խօսելով արտայայտել ամենալայն
մանկավարժական դադափարներ, իսկ գործի ժա-
մանակ հակառակն անել, և շարունակել աշա-
կերտներին ծեծել, չորացնել, և ամեն տեսակ մի-
ջոցներով նրանց վախեցնել, մեր վարժապետ-
ների սովորական յատկանիշն է դարձել, այն
վարժապետների, որոնք սովորել են կարծել, թէ
ամեն մի դադափար, և ամեն մի միտք լաւ
է միայն իբրեւ դադափար և իբրեւ միտք, և պիտանի
չէ գործնական կեանքի մէջ, նպատակայարմար
չէ իրականութեան մէջ... Եւ այդ է ահա Պետ-

Կրկին տիրեց լուռութիւն:
Երկրորդ անգամ այլ ևս ոչ ոք չեկաւ և մեր
գրական երեկոյթներին ընակախոս պիւր
յուս: Դա եղաւ առաջին և վերջին երեկոյթ:

* * *
Մի ժամանակ, տաւան և հինգ տարի առաջ,
«Մշակ» խմբագրատան սենեակներում, յիշում եմ,
հաւաքվում էին բաղմամբ մարդիկ: Ամենքը խօ-
սում, վիճում, գրում, կարդում էին... Ոչ զբի զլուր
չէր անցնում յօդուածի համար փող պահանջել...
Մարդիկ իրանց պահանջ էին դրում մտաւոր
կեանքի. այն ժամանակ տիրում էր իր քաղա-
կան ու թիւնը:

Իսկ այժմ...
* * *
Քանի մի տարի սրանից առաջ ևս ուղեցի
թղթիկ ֆելիետոնիստի պաշտօնը «Մշակ» մէջ և
վճեցի իմ սեփական օրգան հիմնելու: Բայց որով-
հետեւ հայերէն լրագիրներ բաւական թուով կան,
վճեցի մի ամսագիր հիմնել:
Հաւաքեցի իմ տանը ծանոթներին մի բաւա-
կան մեծ շրջան, որոնք բոլորն էլ պատկանում
էին մեր ինտելիգենցիային: Բերեցին թէյ, սկսվե-
ցան խօսակցութիւններ:
Երբ որ յայտնեցի միտքս, բոլոր ներկայ
գտնվածները միաբերան պատասխանեցին ինձ.
«Գոյ՛ւմար անեն, որ կարողանաս մեզ օտոյից այս-

տալօցիի և Ֆրէդրիկ անունով երգիչը հայկական մանկավարժութեան առաջադիմութիւնը, որի ներկայացուցիչները նեղ ընկած տեղը իրանց իրաւունքն են համարում ասել թէ՛ հայ երեխան ուրիշ պայմաններ մէջ է գտնուում, և դրանց համար ծեծը հարկաւոր է:

Այլ պարոններ, հայ երեխայի վրէժն մի փաթաթէք ձեր պակասութիւնները. դուր մի աշխատէք ձեր անձնական յատկութիւնները և ձեր մանկավարժական թելադրութիւնները ֆիզիոլոգիական երեւոյթներով բացատրել: Այդ անաշտ փորձ է: Դաստիարակութեան այդ սխալ ընթացքը, որը աշակերտներին պահում է մշտական երկիւղի, սարսափի և ճնշման մէջ, արդէն իր դառն հետեւանքները ցոյց է տուել ամբողջ աշխարհում:— այդ սխալ ընթացքը մեր կրթութեան գործին բացի վնասից ոչինչ օգուտ չէ տուել և չի էլ տայ: Ուրեմն ինչու և ինչի համար, և ինչ նպատակով է շարունակուում այդ վնասակար և հակակրեւելի ընթացքը...

Խ. Մ.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Տարին վերջանում է և ահա տարվայ այդ վերջին ամսվայ ընթացքում թիֆլիսի ամեն թատրոններում, կուրսներում և ուրիշ տեղերում տրվում են կոնցերտներ, կազմվում են պարահանդէսներ, օպերան իր կարգով շարունակվում է, մի խօսքով թիֆլիսի բազմապիսի և բազմազան հասարակութիւնների ինտելիգենտ ներկայացուցիչները ամեն միջոց գործ են դնում ուրախացնելու ժողովուրդը, մուսացնել տալու հասարակութեանը վերջապէս տարվայ ընթացքում նրա կրած տառապանքները, նիւթական նեղ դրութիւնը, որպէս զի գոնէ եկող 1888 թիւին թիֆլիսի հասարակութիւնը, մարդիկներին յատուկ անվերջանալի յուսով, դիմաւորէ նոր տարուս:

Սակայն, երբ ուստի հասարակութիւնը կարող է իր անաշտութիւնները, տառապանքները մոռացութեան տալ, ցրուել, լքելով քաղաքային թատրոնում օպերայի երգիչներին, երբ նոյն հասարակութեան մի ուրիշ մասը կարող է բանիկ թատրոնում Ֆորկատիի դրամատիական խմբի ներկայացումները տեսնել, վերջապէս վրացիները կարող են վերոյիշեալ թատրոնում վրաց լեզուով ներկայացումներ տալ, ուր պէտք է դնան խեղճ հայերը, որ գոնէ կարողանան ամբողջ տարվայ մէջ իրանց ունեցած հոգսերը և կրած նեղութիւնները մոռանալ, մի փոքր զուարճանալ,— ոչ մի տեղ թիֆլիսի մեր հայ հասարակութիւնը այս հանգամանքներում կարելի է նմանեցնել մի որը, չքաւոր և անտէր ընտանիքին, որը, նայելով իր չորսը կատարվող ուրախութիւններին, ստիպված է մութ, ողորմութիւն լինողը, որ գոնէ սովածութիւնից չը մեռնի: Եւ իրաւ, մենք, թողած բոլոր ուրախութիւնները, մուրում ենք, զէյթունների համար փողեր ենք հաւաքում:

Ահա 4—5 տարի է անցել մեր հայ թատրոնական խմբի գործունէութեան ոսկէ դար անուանված ժամանակից, և այդքան տարիների ընթացքում այլ ևս անկարելի եղաւ կազմակերպել մի

թատրոնական խումբ, որ գոնէ կազմակերպ տանէր հայ-թատրոնական գործը, գոնէ այնպէս, ինչպէս որ շարունակում էր այդ գործը պ. Չմէկեան իր խմբով իր 25 տարվայ գործունէութեան միջոցին: Այժմ մեր թատրոնատէր հասարակութեան մէջ, Կ. Պօլի հասունեան և հակահասունեան կուսակցութիւնների նման, կազմակերպվել է երկու կուսակցութիւն, որոնցից մէկը հայ թատրոնի գոյութիւնը ցնորք է համարում առանց Կ. Պօլի սկզբնաւորված դերասանների և դերասանուհիների, իսկ միւս կուսակցութիւնը հակառակ չէ պոլսեցի դերասաններին, բայց ասում է, թէ մեր հասարակութեան ոյժերից բարձր է պոլսեցի դերասաններին ուժիկ տալ, ուրեմն պէտք է այդ մտադրութիւնը բոլորովին գլխից հանել և թողնել, որ թատրոնական գործը առաջ դնայ մեր տեղական ոյժերով: Մեր յիշած կուսակցութիւնները առաջինի պատկանում են այնպիսի անձինք, որոնք երբեմն ղեկավարել են հայ թատրոնական գործը, դրեք ունեն հասարակութեան մէջ, և հայ թատրոնի այցելուների մեծ կոնտինգէնտը դրանք են կազմում, իսկ միւս կուսակցութեանը պատկանում է գլխավորապէս պ. Չմէկեան իր խմբով և հասարակութեան մի յայտնի մասը: Եւ ահա այդ երկու կուսակցութիւնները ջլատելով միմեանց ոյժերը, պատճառ են դառնում հայ թատրոնի կործանման:

Մեր կարծիքով, աւելի լոգիկաբար են դատում երկրորդ կուսակցութեան ներկայացուցիչները, ասելով առաջին կուսակցութեանը, թէ քանի որ դուք համ զիրք ունեք հասարակութեան մէջ, համ ազդեցութիւն ունեք, համ փող ունեք, բայց ձեռքերը ծալած նստած էք, և չէք կամենում զուլանել ցուցնել թատրոնական գործը սկսելու համար, գոնէ մեղ մի խանգարէք վերոյիշեալ գործը առաջ տանելու: Եւ ճշմարիտ, ինչ լոգիկա է ասել, թէ քանի որ պոլսեցի դերասաններ չը կան, չարժէ ունենալ հայոց թատրոն: Այդ մի և նոյնը կը լինէր, եթէ մի չքաւոր, աղքատ մարդ ասէր, թէ քանի որ ես այս ինչ հարուստի նման մի քանի ձով կերակուրներ չեմ կարող ուտել, որովհետեւ միջոց չունեմ, ուրեմն լաւ է քաղցած մեռնեմ...

«Մշակի» ներկայ համարի մէջ մեր ընթերցողները կը կարգան, որ մեր տաղանդաւոր դերասան պ. Աղամեան յունկարի վերջին գալու է թիֆլիս, և, երեխ, կը հաւաքէ իր չորսը մեր տեղական ոյժերը և կը սկսի ներկայացումներ տալ: Պ. Աղամեանի գալով թատրոնական երկու կուսակցութիւններն ևս կարող են իրանց բաւականացրած համարել, և ընդհանուր ոյժերով հաստատ հիմքի վրա դնել և առաջ տանել թատրոնական գործը: Զոյս ունեք, որ թէ պ. Աղամեան և թէ տեղական խումբը միմեանց զիջում ենք անելով, կը սկսեն համարալի գործը, և այդ համեմալութիւնը կը լինի մի հաստատ գրաւական, որ թէ գործը առաջ կը դնայ և թէ հասարակութիւնը կը սկսէ համակրել և նպաստել գործին:

Տ.

բան վճարել,—այն ժամանակ կաշխատակցենք. եթէ ոչ, մնաւ բարեւ:

Ներկայ գտնվածներին մէկը միայն յայտնվեցաւ ջերմ իղէալիստ...

—Պարոններ, ճառում էր նա, մենք պէտք է ոչ թէ փողի համար աշխատենք, այլ դադափարի համար, պէտք է բոլոր ձրիապէս գրենք, մինչև որ ամառը լաւ գնայ... Գուցէ ժամանակով կը կարողանանք վարձ էլ ստանալ մեր աշխատակցութեան համար: Բայց դեռ մեր անձնուէր աշխատանքով ոտքի կանգնեցնենք գործը,—այնուհետեւ կը տեսնենք: Մեղ համար այդ ամառը իր պէտք է լինի ոչ թէ փողի աղբիւր, այլ միայն անվարձ գրելը մեր պարտաւորութիւնն է: Բացի սրանից մեղանից իւրաքանչիւրը պէտք է յանձն առնի անվարձ այլ և այլ աշխատանքներ կատարել խմբագրատանը՝ հերթով պէտք է սրբագրութիւն անենք, ամեն մէկը պէտք է մի բաժին յանձն առնի և այլն...

—Ոչ, համաձայն չենք, պատասխանեցին ամենքը... Փող կը տաք,— կը գրենք, չէք տալ,— չենք գրի...

Եւ ամենքը դուրս դնացին:

Մնացին միայն երկուսով՝ ես և ջերմ իղէալիստը:

Հէնց որ բոլորը գնացին, ջերմ իղէալիստը դի-

մում է ինձ.

—Եւ թեղ մի բան էի ուզում հարցնել. ճշմարիտ որ և է գումար հանել, ամառը իր սկսելու համար... Ուղիղն ասեմ, թեղ եթէ ինձ փող կը վճարես, տողից այլքան, ես կաշխատակցեմ քո ամառըին:

Բերանս բաց մնացի:

Ամառըին, ի հարկէ, չափողվեց, կրկին մնացի «Մշակի» ֆելիետոնիստ, և առաւօտները խմբագրատանս եմ նստած ու հիւրերին եմ ընդունում:

Այլ, ընթերցող, չէք կարող երևակայել, որ քան հետաքրքիր են առաւօտները խմբագրատան մէջ: Ի՞նչ մարդիկ ասես չեն դալիս խմբագրատուն, և ինչ ասես՝ խնդրեցներով...

Չանդակի ձայն է լսվում, ծառան բաց է անում դուռը:

Մտնում են երկու կանայք, վրացիակ հարցնված:

—Ի՞նչ էք կամենում, հարցնում եմ ես:

—Խմբագրելը դժեւ էր:

—Ոչ, նա այստեղ չէ, ես նրա տեղն եմ, ինչ էք կամենում:

—Մարդ սովորացել է, սկսում է խօսել կա-

ԱՆԻՐԿՈՎԱԿԱՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԳԻՒՂԱՅԻՆԵՐԸ

Պետական կալուածները միջխտրութեան կարգադրութեամբ, ինչպէս յայտնի է, 1885 թականին մի առանձին խմբի ձեռքով նիւթեր հաւաքվեցան Անդրկովկասի արքունական գիւղացիների անտեսական դրութիւնը ուսումնասիրելու նպատակով: Այժմ արդէն այդ նիւթերից կազմվում են ժողովածուներ նոյն գիւղացիների կեցութեան ու դրութեան այս կամ այն ճիւղի վերաբերութեամբ, որոնք ընդհանրապէս ուշադրութեան արժանի աշխատութիւններ են: Այդպիսի աշխատութիւններից է Ս. Զելինսկու ուսերէն գիրքը, որը նորերումս լոյս տեսաւ, և կրում է «Անդրկովկասի արքունական գիւղացիների ցեղական կազմակերպութիւնը, կրօնը և ծագումը» վերնագիրը: Այդ գրքի հետաքրքիր բովանդակութեան հետ ծանօթացնել ընթերցողներին հարկաւոր ենք համարում:

Անդրկովկասում ապրում են երեսուցից աւելի ազգութիւններ և ցեղեր, որոնք տարբերվում են միմեանցից ինչպէս լեզուով, այնպէս և էթնոգրաֆիական առանձնայատկութիւններով: Ներկայումս Անդրկովկասի հինդ նահանգների ազգերը բաժանվում են երկու զիւսաւոր մասի, սպիտակ ցեղ, և մոնղոլական ցեղ: Սպիտակ ցեղին պատկանում են հնդկա-եւրոպական ընտանիքին պատկանող ազգերը. դրանցից են հետեւեալները՝ ռուսները, որոնք եկել են Անդրկովկաս գլխաւորապէս ներկայ դարում, և որոնց մեծամասնութիւնը կազմում են աղանդաւորները: Անդրկովկասում արքունական ուս գիւղերը թույլ 78 են. թէ այդ գիւղերում և թէ մի քանի գիւղերում ուրիշ ազգերի հետ խառն կերպով ապրող ուս արքունական գիւղացիները 44,531 հոգի են երկու սեռի: Սլավոնական ընտանիքին ուսների հետ միասին պատկանում են և Անդրկովկասում ապրող փոքրամիւլ լեհերը:

Գերմանական ընտանիքին էլ պատկանում են գերմանացի-գաղթականները, որոնց գալը սկսված է 1817 թիւից. դրանց թիւն է 4,943: Յոյները սկսել են բնակութիւն հաստատել Անդրկովկասում երեսուցական թվականներից, և այժմ արքունական գիւղացի յոյների թիւը հասնում է 17,027-ի:

Իրանական ցեղին պատկանողներից են թաթերը 88,852 հոգի, թաթիները, որոնք ապրում են 126 արքունի գիւղերում և որոնց թիւն է 29,617, թուրքերը, որոնք կազմում են մինչև 283 արքունական գիւղեր, և թույլ 58,299 հոգի են, և օսեթները, որոնց թիւն է 7,849: Ինչպէս այդ բոլոր ազգերը, այնպէս և հայերը պատկանում են հնդկա-եւրոպական ճիւղին: Անդրկովկասի հայերը բաժանվում են երեք զիւսաւոր կարգի. բնիկ հայեր, Պարսկաստանից գաղթած հայեր և թիւրքիսից գաղթած հայեր:

Արքունական հողի վրա ապրող հայ գիւղացիների թիւը 478,809 է: Երեսնի նահանգում հայ գիւղերի թիւը 333 է. Գանձակի նահանգում՝ 193, Թիֆլիսի նահանգում՝ 101, Բազուի նահանգում՝ 24: Հայերը ապրում են շատ տեղ խառն

նանցից մէկը, պիտի տանեք նրան Բազու, ամա փող չունենք, որ ժեղէնի դուրսի բիւլէթ վերցնենք. մէք բարութիւն արե՞ք ժեղէնի դուրսի մուֆթա բիւլէթ մեղ չնորհեցէք:

—Ուրեմն բիւլէթ վերցնենք ձեզ համար, ի՞նչ բաներ էք ասում:

—Լսիւ ինք, որ հրամանք մուֆթա բիւլէթ ունեք:

—Ի՞նչ անենք որ ունենք. բիւլէթ խմբագրութեան համար է և ոչ թէ օտարների համար...

Կրկին զանգակ, կրկին դուռը բացվում է և մտնում է մի պատասխանող երիտասարդ:

—Ի՞նչ էք կամենում:

—Ես լքմիւսնի ձեմարանի աշակերտ եմ.

—Ուսումը աւարտե՞լ էք:

—Ոչ.

—Ի՞նչ էք ուզում.

—Օրենքէք, հայ չունեմ ուսելու, պաշտօն տուցէք մեղ.

—Ազատ պաշտօն չունենք.

—Բաս փող տուցէք:

—Աւելորդ փող չունենք:

—Եւ ի՞նչ ազգի գործիչներ եք, եթէ չէք օգնում...

—Վհ, էլ եր պակաս. մենք ի՞նչ մեղաւոր ենք

ուրիշ ազգերի հետ ես:

Անդրկովկասում ապրում են արքունական հոգիների վրա նոյնպէս և հրէաներ՝ 4,467 հոգի, արաբներ՝ (գլխաւորապէս Շամախու և Գեօկչայի գաւառներում) թույլ 4,663 հոգի, ասորիներ՝ մինչև 1134 հոգի, գլխաւորապէս Երևանի և Էջմիածնի գաւառներում:

Անդրկովկասում ապրում են և Գարթվիկ աղ-գիւթեան պատկանողները, որոնք կրում են Վլադիմիրայի այն տեղերի անունները, ուր ապրում են. քարթվիկները կամ սոփրական անունով վերացիներ, ապրում են գլխաւորապէս Թիֆլիսի և Գուրթայի նահանգներում: Գրանցից են իմերետները, մենգրելները, զուրիացիները, թուշիները, խելուքները, վալախները, ուլանները, քարթվիկները, կախիթացիները, լազերը: Գարթվիկները Թիֆլիսի նահանգում կազմում են 586 հոգի, Գուրթայի նահանգում 496 հոգի, և բոլորը միասին 323,304 հոգի են երկու սեռի: Տիւրքերի և Գուրթի գաւառներում ապրում են կիտիներ, թույլ 1,876 հոգի, և ինգուշներ՝ թույլ 332 հոգի: Բացի դրանցից Անդրկովկասում ապրում են և այսպէս կոչված լեզգիներ, որոնք հայոց պատմութեան մէջ յայտնի են ալան անունով. դրանք մեծ մասամբ ապրում են Գուրթայի, Նուխու և Գեօղչայի գաւառներում, և դրանց թիւն է 51,853: Իրանց են պատկանում և ուղէացիները, որոնք մեծ մասամբ խօսում են հայերէն և շատ տեղ էլ հայացած են:

Մոնղոլական ցեղին պատկանում են թաթարները (թուրք), տաճիկները և մուղալները: Իրանց իրանց այժմ մուսուլման են անուանում իրանց լեզուով: Իրանք մեծ մասամբ կենտրոնացած են Բազուի, Գանձակի նահանգներում, Երևանի նահանգի հարաւային մասերում և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գաւառում: Իրանք կազմում են մինչև 1,443 արքունի գիւղեր, և թույլ 547,598 հոգի են երկու սեռի:

Կենցաղավարութեան կողմից Անդրկովկասի արքունական գիւղերը երկու զիւսաւոր մասի են բաժանվում, այն է նստակեցանք և թափառականներ (քեօլդուներ):

Անդրկովկասի արքունական գիւղացիները դաւանում են հետեւեալ կրօնները՝ քրիստոնէութիւն, մահմետականութիւն, թաւմուդականութիւն և եզիզների կրօնը:

Քրիստոնէական կրօնի ուղղափառ դաւանութեան պատկանողները՝ ռուս, յոյն, քարթվիկ (վրացի ազգութիւններից) և մի քանի ուրիշ ազգութիւններից թույլ 350,116 հոգի են: Իրանց մէջ են և մի քանի հարիւր հայեր (ի միջի որոց և ուղէացիները) որոնք այժմ դաւանում են ուղղափառութիւն: Լուսաւորչական դաւանութեան պատկանում են 467,619 հայեր, 5,064 ուղէացիներ և 75 բօշաներ: Հայ կաթօլիկների թիւն է 10,679. վրացի կաթօլիկների (?) թիւն է 1,934. հայ բողոքականների թիւն է 284: Գերմանացի բողոքականները թույլ 4,943 են: Ռուս-աղանդաւորները թույլ 34,099 են:

Մահմետական կրօնին պատկանողները, ինչպէս յայտնի է, երկու կարգի են բաժանվում. առաջինը՝

որ ձեմարանի մէջ ոչինչ չէք սովորել, որպէս զի կարողանայիք ապրուստ փաստակել: Փոխանակ փիլիսոփայութեան, տրամաբանութեան, գործնական և տեսական մանկավարժութեան ձեմարանում սովորելու, գնայիք կօչկակարութիւն, դերձակութիւն սովորելու, աւելի լաւ կը լինէր: Գոնէ հայ կաշխատէիք հիւսա և չէիք դիմի ուրիշների օգնութեանը:

Կրկին զանգակ:

Մտնում է մի պարոն, քաղցր ժպիտը երեսին, կարծես թէ մեր մօտիկ բարեկամը լինի:

—Ի՞նչ էք կամենում.

—Ձեր գաղտնի գրվել ենք ուղում.

—Ձեր ազգանունը և հասցէն.

—Խմբագրին յայտնի է մեր ազգանունը և հասցէն, տաս տարի է, որ «Մշակը» ստանում ենք:

—Ի՞նչ անենք, ամենքին միշտ չէիք կարող դարձեալ ասեցէք:

—Ձեր դափտարներում գրված կը լինի.

—Դարձեալ ասեցէք.

Պարոնը ասում է վերջապէս իր անունն ու ազգանունը և քաղաքի անունը, որտեղ ուղում է ստանալ թերթը և մի և նոյն ժամանակ հանում է հինգ բլբլի:

—Ներկեցէք, հիւսա ամբողջ տարվայ վճարը չենք

սունիտները 311,150 հոգի են, և երկրորդը՝ չի-
խաները՝ 471,761 հոգի: Թալիստանականութիւն
դաւանող հրէաների թիւն է 4,467, իսկ եղիւնիների
դաւանութեան պատկանող քուրդները թւով 8,808
հոգի են:

ԲԱԳՈՒԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Բագուի Մարդասիրական ընկերութեան խոր-
հուրդը հրատարակել է ընկերութեան վերջին
չրջանի դրժանեղութեան և վիճակի բաւական
մանրամասն հաշիւը, և գրանցել նա կատարել է
դէպի հասարակութիւնը ունեցած իր պարտաւո-
րութիւնները մէկը Այդ հաշիւը երեւում է, որ
1887 թվ. յունվարի 1-ին ընկերութիւնը ունեցել
է անմեքենայի մայր դուստր զուտ գրամով
37,823 ռուբլի 37 կոպէկ, և 45 հատ առաջին և
երկրորդ փոխառութեան խաղաղութներ 4,702
ռուբլի 50 կոպէկ արժողութեան: Աւելացնելով
դրա վրա ընկերութեան գրադարանը, չարժական
և անշարժ կայքերը, 1886 թվ. դարձուածական
գումարը և ուրիշ մի քանի աղբիւրներից ստա-
ցած եկամուտները, երեւում է, որ 1887 թվ.
յունվարի 1-ին ընկերութեան ամբողջ կարողու-
թիւնը հասնում էր 59,726 ռուբլի 67 կոպէկի:
1886 թվ. ընթացիկ ծախք ընկերութիւնը ունե-
ցել է 3,998 ռուբլի 56 կոպէկ: Ընկերութեան
տարեկան անդամների թիւը 1886 թվ. շատ
քիչ է եղել, այն է տասներեք, այնպէս որ ան-
դամակցական վճար ստացվել է 65 ռուբլի: Պէտք
է նկատել, որ ընկերութեան եկամուտների աղ-
բիւրները կազմում են անդամակցական վճարնե-
րը, անխփոխ անդամութեան վճարները, (անփո-
փոխ անդամների թիւը 1887 թվ. կանխի սկզբին
հասնում էր 296-ի) կտակած գումարներ, նուիրա-
տութիւնները և տոկոսները: Մարդասիրական ըն-
կերութիւնը ունի իր գրադարան-ընթերցարանը:
Գրադարանի մէջ ևս 1-ին յունվարի 1887 թվ.
կար 810 հատոր հայերէն գրքեր, 2,694 հատոր
ռուսերէն և օտար լեզուներով, ընդամենը 4,145
ռուբլի 50 կոպէկ արժողութեան: 1886 թվ. վեր-
ջերին գրադարան և ընթերցարանը ունեցել է
մինչև 100 բաժանորդ, իսկ պատահական այցե-
լուծներ իւրաքանչիւր ամիս եղել են միջին թւով
107 հոգի:—Թէ ինչն է պատճառը, որ գրադա-
րան—ընթերցարանը բաժանորդների և այցելու-
ների թիւի կողմից աճող չէ, այդ որոշել դժուար
է, բայց եթէ յիշատի դրա պատճառները ներքին
են, այսինքն գրադարան—ընթերցարանի աղքա-
տութիւնը և դանդաղան անյարմարութիւններն են,
այն ժամանակ չէ կարելի չը ցանկանալ, որ ըն-
կերութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէր այդ
բանի վրա, որովհետեւ լաւ գրադարանը մեծ ծա-
ռայութիւն կարող է մատուցանել քաղաքի բնա-
կիւններին:

1886 թվականին ընկերութիւնը ունեցել է ութ
որդեգիրներ, որոնց տուել է 905 ռուբլի օժան-
դակութիւն միայն: Ինքն ըստ ինքեան հասկանա-
լի է, թէ այդ ինչ մի ճնշին օժանդակութիւն է,
եթէ յիշատի լինենք, որ որդեգիրներից շատերը
ուսանում են Պետերբուրգում, փարիզում, և այլ
այդպիսի տեղերում, ուր սպորուստը շատ թանկ

կարող տալ, միայն 5 ռուբլի կը տանք, իսկ
տարվայ վերջը մնացած 5 ռուբլին:

Դ՛ւաւ, նստեցէք մինչև որ անդորրադիրը կը
գրվի:

Մինչև որ անդորրադիրը գրվում է, այցելուս
դարձնալ դիմում է հետեւեալ հարցմունքով:

—Էս տարի «Մշակ» կը լինի ամիսօրեայ թէ
ոչ, ամբողջ ազգը ցանկանում է:

—Չեմ կարծում, եթէ ամենքը 10 ռուբլու տեղ
ձեզ պէս 5 ռուբլի վճարեն, դրա հետ էլ կունենանք
1,000 բաժանորդ միայն, հազիւ թէ լրացիրը
կարող է ամենօրեայ դառնալ:

—Հրամանք միթէ բաւական փող չունէք:

—Որտեղից:

—Այ, զէյթունցիների համար, օրինակ ասինք,
բաւական փող էք ստանում... «Մշակի» վրա դործ
դրեցէք էլի... Բով ինչ կասի... զաղէթն էլ ամեն-
օրեայ կը դառնայ...

—Շնորհակալ եմ խորհրդի համար:

—Ուզում եմ ձեր զաղէթն գրվել, մէկ էլ օրիպ-
լէնիա տպել ձեր «Մշակում», ասում է մի թիֆ-
լիսցի, մտնելով խմբագրատուն:

—Ձեր յայտարարութիւնը բաւական մեծ է,
ինչքան անգամ ուզում էք որ տպենք:

—Հարկւր անգամ, այսինքն ամբողջ տարի:

է: Տարեկան 150 ռուբլի տալ մի ուսանողի, որ
սպորում է փարիզում կամ Ժնէվում և կամ Պե-
տերբուրգում, կը նշանակէ հաստատ միջոց չը
տալ նրան իր ուսումը աւարտելու: Եւ իրա-
կանութեան մէջ այդպէս էլ լինում է: Այդ, ի
հարկէ, ցանկալի չէ. ընդհակառակը ցանկալի է,
որ ընկերութիւնը ունենար մի քանի լիակա-
տար օրդեգիրներ, որոնց միջոց տալով ի-
րանց ուսումը աւարտելու թէ մի չօշակիւի գործ
կատարած կը լինէր, և թէ նոյն իսկ իր բարոյա-
կան ոյժը կը մեծացնէր: Ուսանողներին օգնելու
խնդիրը այժմ այնքան ուշադրութեան արժանի
լինողի է, որ Մարդասիրական ընկերութիւնը լաւ
կանէր, եթէ իր գործունէութեան մի նշանաւոր
մասը ուղղէր դէպի այդ բանը:

Բացի Բագուի երկսեռ դպրոցներից, Մարդա-
սիրական ընկերութիւնը օժանդակութիւն է տուել
մի քանի հայոց դպրոցներին հետեւեալ տեղերում.
Խաչատուր, Քիլիվարում, Վարդաշէնում, Ամիրվա-
նում, Սուլթան-Նուրում, Ղուբայում, Նախիջևա-
նում և Ղանձակի ս. Թարգմանչաց վանքում (?):
Վճոված է օժանդակութիւն տալ նոյնպէս և Շա-
մախու օրիորդաց դպրոցին և Նուխու գաւառի
Բէյգեար-բեհնը գիւղի դպրոցին:

Յայտնի է, որ անցեալ տարի ընկերութեան
դպրոցի շինութեան մի մասը դո՛ւ գնաց հրդեհի.
դպրոցի համար նոր շինութիւն կառուցանելու
նպատակով Բագուում ընկերութիւնը հանգանա-
կութիւն է բացել, որի դուռը 1887 թվ. սկզ-
բին հասել է 12,510 ռուբլու, բայց տարալատդա-
բար կանխիկ ստացված է միմիայն 4,700 ռուբլի,
այդ գումարով կանոնաւոր դպրոց շինել չէ կա-
րելի, բայց, ի հարկէ, չէ կարելի և չունենալ
դպրոցի համար կանոնաւոր շինութիւն:

Թողնելով մի կողմ Մարդասիրական ընկերու-
թեան մի քանի երկրորդական գործերը, չենք կա-
րող ուշադրութեան չառնել ընկերութեան յարու-
ցած քաւոյզ չէ հարցը: Գեա. 1885 թվ. ընդհա-
նուր ժողովը վճռել է, որ ընկերութիւնը ունենայ
մի արժանաւոր քարոզիչ, որի պարտաւորութիւնը
լինի պատեղ գիւղերը և քաղաքները՝ քարոզելու
պարտաւորութեամբ: Այդ մի գեղեցիկ միտք է,
որը իրականացնելու համար աշխատել է և այժ-
ման խորհուրդը, նշանակելով քարոզչին տարե-
կան 400 ռուբլի ուճիկ:

Մեզ մնում է ցանկանալ, որ Մարդասիրական
ընկերութեան վարչութիւնը կրկնապատկէ իր
ջանքերը՝ շատացնելու ընկերութեան եկամուտնե-
րը, որպէս զի դո՛ւն գրանով կարելի լինի օգնու-
թիւն հասցնել մայրենի լեզուից զրկված գիւղերի
դպրոցներին, աղքատ ուսանողներին, և առհասա-
րակ բաղմատեսակ օգնութեան կարօտներին, ո-
րոնցով շատ հարուստ է մեր կենսը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՐ

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են: «Այսօր դեկտեմբերի
20 է և ձմեռը դեռ շատ մեղմ է անցնում, այն-
պէս որ դաշտային աշխատութիւնները դեռ ևս
շարունակվում են: Հարկւրաւոր բանւորներն էլ
ժայռերը վառօգով քանդում են՝ հեղեղից փչացած
խճուղին ուղղելու համար»:

- Դա կարժենայ 20 ռուբլի:
- Ինչպէս կարելի է. թանգ է....
- Հօ ուռւաց կամ վրաց դաղէթին աւելի կը
տաք:
- Դա ուրիշ է, պարոն... հայոց դաղէթին
յայտարարութեան համար 20 ռուբլի տալը Բով է
տեսել:
- Պակաս չենք կարող:
- «Մշակ» դաղէթը այստեղ է.
- Այո՛.
- Ուզում եմ գրվել, ինչքան վնասեցինք
խմբագրատունը, հազիւ դառնք:
- «Մշակի» ամեն համարում տպվում է մեր
աղբիւրը. դժուար էլ չէ գտնել, քանի որ խմբա-
գրատունը փոստատան կողքին է:
- Տարեկան քանի արժէ.
- Տաս ռուբլի.
- Թանգ է. պակաս չէք տալ.
- Չենք կարող. դաղէթը թաղա ձուկ հօ չէ.
- Ուրիշները օխտը մանէթով են տալիս:
- Ձը գիտեմ, շատ կարելի է. այն ուրիշների
մօտ դնացէք:
- Վերջտպէս ժամը երկուսին խմբագրատունը
փակվում է և մենք բոլորս, խմբագրատան ան-

ԿԱՐՍԻՑ մեր թղթակիցը հաղորդում է մեզ որ
այդտեղի քաղաքային բժիշկ, պ. Մէլի-Փարսա-
դանով ամեն օր ձրիապէս ընդունում է հիւանդ-
ներին պօլիցիայի սենեակներից մինում:

Մեզ գրում են ԳԻՐԻՆՍԻՑ հետեւեալը: «Ինչպէս
յայտնի է ձեր լրագրի ընթերցողներին, տեղիս
Ամենատուր-Փրկիչ եկեղեցու երեցփոխան Առա-
քել Բարայանց վախճանվեցաւ նոյեմբերի 13-ին,
սակայն մինչև այժմ նրա փոխարէն նոր երեցփո-
խան դեռ ևս ընտրված չէ: Եկեղեցու հաշիւները
խառն են մնացել, քանի որ հանգուցեալը մեռաւ
առանց վերջացնելու հաշիւները: Այժմ հարկաւոր
է եկեղեցու համար մի արիւնջան և անշահասէր
երեցփոխ, որ ոչ թէ միայն իր աշխատութեամբ
կարողանար կարգի բերել հաշիւները, բայց և ու-
շադրութիւն դարձնէր ուսումնարանի նիւթական
անապատով դրութեան վրա: Հանգուցեալ երեց-
փոխը անցեալ տարվայ ընթացքում ոչ մի կօ-
պէկ տուած չէ դպրոցին»:

Մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը
տպագրելու համար: «Ինչպէս յայտնի է Ներսի-
սեան դպրոցի աշակերտների մեծ մասը գաւառ-
ներից եկած չքաւոր ընտանիքի գաւակներն են,
որոնք ծնողներից ոչ մի օգնութիւն չը սպասելով,
իրանց յոյսը դնում են դպրոցից ստացած թոշա-
կի վրա, կամ եթէ այդ չէ աջողութիւն, այն ժամա-
նակ դիմում են ընկերոջ կամ բարերարի օգնու-
թեանը: Այդպիսիները գալով Թիֆլիս վարձում
են մի խոնաւ սենեակ և չորս հինգ աշակերտ
միասին ապրում Թողնելով այն, որ շատ անգամ
քաղցած փորով են անցկացնում օրերը և հա-
զար ու մի տեսակ ներութիւն են կրում մեր այդ
ապագայ ուսուցիչները, հոգեւորականները, Ներսի-
սեան դպրոցը այս տարի իր նոր կարգադրու-
թեամբ այդ խեղճերի վրա մի նոր հոգս էլ է ա-
ւելացրել: Նախորդ տարիները ամեն մի երթեկեկ
աշակերտ երեկոներն էլ կարող էր գնալ դպրոցը
և իր յաջորդ օրվայ դասերը այնտեղ պատրաս-
տել, որով մասամբ օգնում էր իր սուղ միջոց-
ներին, չը վճարելով տանտիրոջը դիշերը նաւթի
և ձմեռ. ժամանակ սենեակը տաքացնելու համար
փայտի փողը և շատ անգամ էլ հարկաւոր դա-
սաղքերը չունենալով, գիշերօթիկ աշակերտների
գրքերիցն էր օգտվում, և իր սենեակը վերադառ-
նում էր միայն քնելու: Իսկ այս տարի նոր կար-
գադրութեան չնորսով այդ իրաւունքը աշակերտ-
ներից վերցված է և երթեկեկ այլ ևս իրաւունք
չունի դպրոց յաճախել, ուրեմն խեղճ աշակերտի
վրին ծանր բեռի վրա մի ուրիշ բեռն աւելացաւ.
թող հիմա իւրաքանչիւր աշակերտ իր մասին մը-
տածէ, կամ գիշերը այս ձմեռ. ժամանակ մութ և
ցուրտ սենեակում նստի, իր դասերը պատրաստէ,
ոչինչ գրքեր չունենալով: Զարմանալի կարգա-
դրութիւն:

Մահաեսի Գրիգոր Սամարցեանցից ստացանք 10
ռուբլի, որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշա-
կի» մի տարեկան օրինակ նրա անունից Նոր-
Նախիջևանի մօտ գտնվող Սուրբ-Խաչ վանքի ու-
սումնարանին:

Մահաեսի Գրիգոր Սամարցեանցից ստացանք 10
ռուբլի, որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշա-
կի» մի տարեկան օրինակ նրա անունից Նոր-
Նախիջևանի մօտ գտնվող Սուրբ-Խաչ վանքի ու-
սումնարանին:

Համեսի, տուն ենք գնում, յօդանոց գլխաւորա-
պէս հիւրերի հետ ապարդիւն խօսելուց:

Տարին վերջանում է և նոր տարի է սկսվում:

Ամենքը ինչ ասեալ ընկալման են անում: Վաճա-
ռականից սկսած մինչև խմբագիրները ամենքը
ընկալման են անում մարդկանց գրաւելու հա-
մար:

Ի հարկէ մեր ընկալմանը աւելի անշնորհ են,
քան թէ ամերիկական ընկալմանը, բայց ինչ և
իցն է րէ կլաւ մենք ր սովորական բան են դառ-
նում և մեզ մօտ:

Մեր խմբագիրների ընկալմանը, նոր տարվայ
համար բաժանորդներ գրաւելու նպատակով գը-
լխաւորապէս նրա վրա են կայանում, որ մի լրա-
գրի խմբագիրը աշխատում է միւս լրագրիւնների
խմբագիրների անձնական յարգը հասարակու-
թեան աչքում կոտորելու:

Գեղեցիկ միջոց....

Մենք այդ շնորհը չունենալով, վերջացնում
ենք մեր տարին առանց ընկալմանի, պարզ կեր-
պով «հնորհաւոր նոր տարի» ասելով մեր հասա-
րակութեանը և ամբողջ սրտից ցանկանալով որ
նոր տարին այնքան ծանր, ծանծարագացիչ, տաղ-

Ներսիսեան դպրոցի տեսուչ, Սարգիս քահանայ
Բէզմադարեանցից ստացանք 12 ռուբլի 40 կօ-
պէկ, որ հաւաքել են իրանց մէջ Ներսիսեան
դպրոցի 4-օրը դաստան աշակերտները յօգուտ
Ձէյթունի հրկիզեալների և իրանց դաստիարակ
պ. Չորաբեանի ձեռքով յանձնեցին տեսչին, մեր
խմբագրութեանը հասցնելու համար: Անցեալ
139 ռուբլու հետ կունենանք մեր խմբագրու-
թեան մէջ 151 ռուբլի 40 կօպէկ:

Ստացանք Պետերբուրգից, մի հայ պարոնից 10
ռուբլի յօգուտ Ձէյթունի հրկիզեալների: Եղած
151 ռ. 40 կ. գումարի հետ ունենք այժմ խմբա-
գրատանը 161 ռ. 40 կօպ. յօգուտ զէյթունցի-
ներին:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են դեկտեմբերի 26-ից
հետեւեալը: «Վերջապէս ձին եկաւ մեր քաղա-
քում և ծածկից նրան սպիտակ սաւանոնի ժողո-
վուրդը ուրախ է և հաւատացած է այժմ որ հա-
ցի թանգութիւն չի լինի և ցորենի հունձը բարե-
բեր կը լինի»:

Մեզ գրում են Ղուբայից, որ քանի մի օր է որ
այդտեղ եկել է Թիֆլիսից աստիճանաւոր պ. Մէլի-
քով և սկսել է արդէն լեզվալիւս Ղուբայի գաւա-
ռական վարչութեան մէջ:

Լուսն ենք, որ մեր դերասան պ. Աղամեան
մտադիր է այս ամիս վերջերին Օղեսայից Թիֆ-
լիս վերադառնալ: Հաւանականաբար պ. Աղա-
մեան այստեղ մի քանի հայերէն ներկայացումներ
կը տալ:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
հաշուով շուտով պէտք է հրատարակվի վրացերէն
լեզուով մի գիրք՝ խաղողի որթը աճեցնելու մա-
սին, որը կազմել է Ժողովրդի և Ժողովրդական
դպրոցների համար ընկերութեան անդամ պ. Մի-
նամձղվարով:

Պ. Եագոր Խուդադեանց ուղարկելով մեզ 10
ռուբլի, խնդրում է 1888 թվ. «Մշակի» մի օրի-
նակ ուղարկել Շուշալէի հայոց դպրոցին:

Ստացանք յօգուտ Ձէյթունի հրկիզեալների՝ 1)
Շուշալէից 23 ռուբլի, որ հանդեսակել են ի-
րանց մէջ Շուշալէի հայոց երկսեռ դպրոցների
աշակերտները, և աշակերտահիւները, ուսուցչա-
կան խումբը և հոգաբարձուները: 2) Պ. Եագոր
Խուդադեանց 5 ռուբլի և 3) պ. Յ. Ստեփա-
նեանի ձեռքով 30 ռուբլի, որ հանդեսակել են
իրանց մէջ Թիֆլիսում Միքայէլ Սաֆարեանցի
ծխախոտի գործարանի բանւորները: Այժմ
խմբագրատանը եղած նախկին 161 ռուբլի 40
կօպէկի հետ միասին, կը լինի 219 ռ. 40 կօպ:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ յօգուտ զէյթուն-
ցիների այնտեղ երկու օրում հաւաքվեցաւ 2,300
ռուբլի և հանգանակութիւնը դեռ էլ չարժեանկ-
վում է:

տկալի, անմիտ, աննպատ, նիւթապաշտ, դա-
տարի չը լինի, որքան դատարի, անմիտ, նիւթա-
պաշտ և տաղակալի էր հանգուցեալ 1887 թիւը:

Գուցէ ընթերցողը սպասում էր ինձանից նոր
տարվայ համար մի ուրախ, գուարթ, ծիծաղա-
յարժ ֆելիետոն,—իսկ ես նրան ներկայացնում
եմ մի տխուր, յուսահատական պէս մի միսա-
կան ֆելիետոն, որ բոլորովին յարմար չէ նոր
տարվայ ուրախ տօնին....

Բայց ինչ անեմ. ինքն կենանք յուսահատական
է, ինքն 1887 թիւը տխուր, յուսահատական էր,
—բնական է որ ֆելիետոնիստը գտնվի նոյն ան-
միտութեան տրամադրութեան տակ:

Որ կողմ և նայէք.—ամեն տեղ կը հանդիպէք
տխրութիւն, յուսահատութիւն, ապատիւ, դժգո-
հութիւն, անտարբերութիւն, կենսիցի գլուխը,
ամեն տեղից կը լսէք իսկ ու վախ, կը լսէք
կենսիցի դժուարութեան վրա գանգաւ....

Կարելի է միթէ պահանջել ֆելիետոնիստից որ
նա ուրախ լինի, երբ բոլորը, ամբողջ հասարա-
կութիւնը տխուր է:

Երանի թէ սկսվող 1888 թիւը աւելի ուրախ
լինի և ամենքին աւելի բաղդ բերի....

Դեկտեմբերի 30-ին գերմանացի պրեսիստ Ալ-
ֆրեդ Ռեյզենաուեր տուեց իր առաջին կոնցերտը
Թիֆլիսի քաղաքային թատրոնում Գերմանացի
հասարակական շատ քիչ կար թատրոնում Մեր
հասարակական թատրոնը ոչինչ չէ կարողում ոչ հայերեն,
ոչ էլ ռուսերեն լեզուով, ուրիշ տեղեկություններ
էլ չունի Ռեյզենաուերի պէս մի պրեսիստի մա-
սին, որ այժմ Եւրոպայում առաջնակարգ պիա-
